## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ՄԱՆԹԱՇՅԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ (Ք.ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Գևորգ Մանթաշյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ք. Սան Ֆրանսիսկո), 2023թ. նոյեմբերի 13-ից 17-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Համաշխարհային տնտեսական համաժողովի նախագահ Բերգե Բրենդե:

5. **Գործուղման նպատակը.**

2023թ. նոյեմբերի 13-ից 15-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներում (ք. Սան Ֆրանցիսկո) կայացած Համաշխարհային տնտեսական ֆորումի «Արհեստական բանականության (այսուհետ՝ ԱԲ) կառավարման համաժողովին» (AI Governance Summit) մասնակցելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները.**

Համաժողովը համախմբել էր ոլորտի առանցքային դերակատարների և կարգավորող մարմինների ներկայացուցիչների, փորձագետների և ԱԲ-ի առաջատար հետազոտողների մի շարք երկրներից՝ հարթակ հանդիսանալով գիտելիքների, կարծիքների փոխանակման, նոր համագործակցության և գործընկերային կապերի հաստատման, ռազմավարական հեռանկարների մշակման, ինչպես նաև համատեղ գործողությունների և ծրագրերի իրականացման համար: Համաժողովի ընթացքում քննարկվել են ոլորտային զարգացման նպատակով համատեղ ծրագրեր իրականացնելու ներուժն ու հեռանկարները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Միջոցառման շրջանակներում 2023թ. նոյեմբերի 14-ին «Salesforce»-ի աշտարակում տեղի են ունեցել «Transformation on the Horizon» (փոխակերպումը Հորիզոնում), «Gen AI: New Age of

Governance» (գեներատիվ ԱԲ՝ կառավարման նոր դարաշրջան), «State of Gen AI: Views from the Frontier» (գեներատիվ ԱԲ վիճակը) թեմաներով պանելային քննարկումներ, որոնց ընթացքում որպես խոսնակ ելույթներով հանդես են եկել՝ ամերիկյան «Salesforce Inc» ընկերության նախագահ և գլխավոր իրավաբան Սեբաստյան Նայլսը, Համաշխարհային տնտեսական ֆորումի Ժնևի գործադիր տնօրեն Ջերեմի Յուրգենսը, Սինգապուրի առևտրի և արդյունաբերության նախարար Գան Կիմ Յոնգը, ամերիկյան «Axios» ամսագրի տեխնոլոգիական թղթակից Ինա Ֆրիդը, էմիրաթական «Dubai Future Foundation» հիմնադրամի գլխավոր գործադիր տնօրեն Խալֆան Բելհուլը, ամերիկյան «OpenAI» ընկերության հանրային քաղաքականության պլանավորման ղեկավար Դեյվիդ Ռոբինսոնը, «Amazon Web Services»-ից պատասխանատու ԱԲ-ի ղեկավար Փիթր Հալինան, ԱԲ-ի ուղղությամբ համաշխարհային քաղաքականության ղեկավար Մարկ Օումեն, «Google Inc.» ճարտարապետության գծով ընկերության ավագ տնօրեն Պիլար Մանչոնն, «Meta»-ի տվյալների պաշտպանության քաղաքականության գծով փոխնախագահ Էվելին Միլլերը, տվյալների պաշտպանության քաղաքականության տնօրեն Մելինդա Քլայբուղը, «Ժողովրդավարության և տեխնոլոգիաներ» ուղեղային կենտրոնի ղեկավար Ալեքսանդրա Գիվենսը և ոլորտի այլ առաջատար կազմակերպությունների, ակադեմիական առաջնորդներ և ներկայացուցիչներ: Համաժողովի ընթացքում միջոցառման մասնակիցների միջև կազմակերպվել են գեներատիվ ԱԲ-ն ներկա իրավիճակի վերաբերյալ ինտերակտիվ երկխոսություններ, արհեստական բանականության ոլորտի առանցքային թեմաների զարգացման հեռանկարների վերաբերյալ լիագումար նիստեր, գեներատիվ ԱԲ տեխնոլոգիաների կիրառման և դրանց ազդեցության վերաբերյալ համապատասխան քննարկումներ:

Ս.թ.նոյեմբերի 15-ին, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը մասնակցել է համաժողովի շրջանակներում տեղի ունեցած փակ աշխատանքային նստաշրջանին, որը նախատեսված էր միայն «AI Governance Alliance» կառավարման դաշինքի անդամների համար: Քննարկվել են ԱԲ-ի ոլորտում միջազգային համագործակցության ձևավորման, ռազմավարությունների մշակման, վերահսկողության պահպանման և նորարարությունների խթանման հիմնական ուղղությունները, որը կարող է ծառայել որպես ուղեցույց ԱԲ-ի կառավարման ոլորտում միջազգային համագործակցության համար: Երկրները արագորեն անցնում են ԱԲ-ի կարգավորմանը՝ ձգտելով ինչպես նվազեցնել

ռիսկերը, այնպես էլ օգտագործել ԱԲ-ի ներուժը սոցիալական և տնտեսական վերափոխումների համար: Գևորգ Մանթաշյանը միջոցառման մյուս մասնակիցների հետ միասին այս աշխատանքային հանդիպումների իրականացմանը նպաստել է նաև իր կողմից ներկայացված առաջարկներով և աշխատանքային ներգրավվածությամբ՝ մասնավորապես մասնակցելով «Ճկուն կառավարում և կարգավորում» թեմայով քննարկումներին: Աշխատանքային հանդիպումներին առկա էին 3 աշխատանքային ուղղություններ՝

1. պատասխանատու կիրառում և փոխակերպում,
2. ճկուն կառավարում և կարգավորում,
3. անվտանգ համակարգեր և տեխնոլոգիաներ:

Նստաշրջանի ընթացքում կազմակերպվել են գեներատիվ արհեստական բանականության անմիջական կիրառման շուրջ երկխոսություններ, ինչպես նաև քննարկումներ «AI Governance Alliance»-ի աշխատանքի առկա ուղղությունների և դրանց հետագա զարգացման, արհեստական բանականության կոլեկտիվ վերահսկողության ռազմավարությունների մշակման վերաբերյալ: ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը ԱԲ կարգավորման, կառավարման և տեխնոլոգիայի զարգացման մեթոդները և քաղաքականության ուղղությունները, մասնակից պետությունների ներկայացուցիչների հետ քննարկել ԱԲ կարգավորման պրոտոկոլների ստեղծման գործողությունների հետագա ընթացքը, կիսվել ԱԲ-ի ոլորտին առնչվող իր գիտելիքներով և փորձով, ներկայացրել ոլորտի զարգացմանն ուղղված ՀՀ-ում իրականացվող նախաձեռնությունները: Մասնակիցների մոտ հիմնական մտահոգությունն էր ԱԲ տեխնոլոգիայի զարգացման ֆիզիկական ենթակառուցվածքի հասանելիության և մատչելիության մոնոպոլիզացիայի ռիսկերն էին և բաց կոդերով ԱԲ լուծումների հասանելիության ապահովմանը վերաբերող հարցերի շրջանակն էր:

Գագաթաժողովի աշխատանքային խմբում ներառված են 9 երկրի ներկայուցիցիչներ (ԱՄԷ, Շվեյցարիա, Սինգապուր, Քաթար, Մալազիա, Ճապոնիա, Գերմանիա, Ռվանդա և Հայաստան), որոնց հետ աշխատում ենք տարվում կարգավորումների և կիրառման կոալիցիա կառուցելու ուղղությամբ: Նստաշրջանների ընթացքում մշակված գաղափարներն ու առաջարկները խթան

կիանդիսանան պատասխանատու արհեստական բանականության տեխնոլոգիաների զարգացման համար, կսահմանեն «AI Governance Alliance» կառավարման դաշինքի հետագա ուղղությունները՝ մեծապես նպաստելով 2024 թվականի հունվարի 15–19-ին Շվեյցարիայի Համադաշնություն քաղաք Դավոսում կայանալիք Համաշխարհային տնտեսական ֆորումի ամենամյա հանդիպմանը, որը հիմնականում կենտրոնանալու է նոր տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների և դրանց ազդեցությունների ուսումնասիրության, համաշխարհային գործընկերության զարգացման վրա: Այդ օրերին նաև նախատեսված է հաշվետվության հրապարակումը:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Այցի ընթացքում Համաշխարհային տնտեսական ֆորումի Ժնևի գործադիր տնօրեն Ջերեմի Յուրգենսի հետ նաև շարունակվեց քննարկումը Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիական արդյունաբերության վերափոխման օրակարգին աջակցելու տարբերակները Համաշխարհային տնտեսական համաժողովի «Չորրորդ արդյունաբերական հեղափոխության կենտրոն» հիմնադրելու միջոցով համագործակցության ձևաչափերի շուրջ:

Այցի ընթացքում նաև պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակելու քննարկումները արհեստական բանականության ռազմավարական հեռանկարների մշակման, ինչպես նաև համատեղ գործողությունների իրականացման ուղղված ծրագրերի վերաբերյալ:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը.**

**ԳԵՎՈՐԳ ՄԱՆԹԱՇՅԱՆ**

**21.11.2023թ.**